ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

REPUBLIC OF ARMENIA, MINISTRY OF EDUCATION AND SCIENCE
HEAD OF STAFF

375010, Երևան, Գլխավոր պողոտա, Կառավարական տուն, 3
Հեռ. / Тел. / Tel.: 52 73 43, ֆաքս/факс/fax (3741) 52 73 43
375010, Ереван, Главный проспект, Дом правительства, 3
375010, Main Avenue, Government House 3, Yerevan
E-mail: mines@edu.am, www.edu.am

№ 12/5-343-04 «10» 08 2007թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ողջ աշխատակազմի անունից՝ ի ուրախություն բոլորիս, շնորհավորում եմ Չինարի գյուղի բնակիչներին և աշակերտներին իրենց միջնակարգ դպրոցի վերաբացման առթիվ: Մեր երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող այս բնակավայրում շատ կարևոր է ունենալ նմանատիպ կրթօջախ, քանի որ, իմ համոզմամբ դպրոցական դաստիարակությունն ու այդ տարիների հուշերն են, որ մարդու մեջ սեր են սերմանում հայրենի եզերքի հանդեպ:

Խորին շնորհակալություն եմ հայտնում այս անձնվեր ու ազգանպաստ ծրագրի շինարարական մասն իրականացնող հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միությանը, Չինարիի գյուղապետին, բնակիչներին և դպրոցի տնօրենին, նաև ԱՄՆ-ում կայացած «Կառուցենք հայրենիքը մեր իսկ ձեռքերով» խորագիրը կրող բարեգործական համերգի բոլոր մասնակիցներին ու նվիրատուներին:

Եվ առանձնահատուկ երախտագիտությամբ եմ ուզում նշել «Կառուցենք հայրենիքը մեր իսկ ձեռքերով» ծրագրի նախաձեռնողի և կազմակերպչի՝ ԱՄՆ-ում ուսանող մեր հայրենակից Նելլի Մարտիրոսյանի անունը: Թող նրա հայրենանվեր և դաստիարակչական խոր բնույթ կրող գործունեությունն օրինակ ծառայի բոլորիս, մանավանդ Չինարի գյուղի դպրոցականների համար իրենց ուսման և ողջ կյանքի ընթացքում:

Վստահ եմ, որ այս պարտավորեցնող նախաձեռնության արդյունքում Չինարիի դպրոցի շրջանավարտները կլինեն մեր երկրի արժանավոր քաղաքացիներ ու ապագա կերտողներ՝ հանուն համընդհանուր բարեկեցության:

Սերգեյ Մինասյան